# ԹԵՄԱԿԱՆ ՊԱՏԳԱՄԱՒՈՐԻ ԸՆՏՐՈՒԹԵԱՆ ԺՈՂՈՎԸ
## ՄԱՐՏԻ 8-ԻՆ 1892 Թ.

---

Արձանագրում եմ մարտի 8-ին կայացած ժողովի նիստը, թողնելով յետագայում անելու իմ նկատողութիւնները։

Ժողովը տեղի ունեցաւ Թեմի առաջնորդարանում։ Դահլիճում տեղ են գրաւել ծխական երեսփոխանները, պաշտօնակատար անձերը և մամուլի ներկայացուցիչները։ Վերջիններիս համար, սակայն, որպէս երեւում է, առաջուց պատրաստութիւն չէր տեսնուած։ Դիւանի սեղանի երկու կողքերը գրաւել են՝ տէր-Ղեւոնդ Խարազեան, տէր-Յովհաննէս Մարտիրոսեանց, տէր-Սարգիս Աղաջանեան, տէր Աշոտ Թէմուրազեան։ Ժամը 12½ մտնում է Թեմի սրբազան առաջնորդ տէր-Մամբրէ եպիսկոպոս Սանասարեան և տեղ գրաւում դիւանի սեղանի ճակատին, ունենալով իւր կողքին նահանգապետի ներկայացուցիչ ի. ք. խ. պ. Ամիրեանին։ Սրբազանի ներս մտնելը ողջունւում է ոտքի կանգնելով։

Սրբ. Նախագահը յայտնում է որ, նախկին փոխարքայի հրահանգի համաձայն, ժողովը համարւում է բացուած երբ ներկայ են իրաւատէրների երկու երրորդը։ Տէր-Ղեւոնդը զեկուցանում է թէ ժողովին ներկայ են իննըսուն (90) հոգի։

Սրբ. Նախագահը յայտնում է՝ ծխական երեսփոխանների թիւն է 100 [1]), հետեւապէս 90 հոգի ներկայ լինելով՝ ժողովը յայտնում եմ բացուած, յայտնում է նաև որ որ և է խօսակցութիւն որ դուրս է նիստի նպատակից՝ արգելւում է։

Նիստը սկսւում է վերստուգելով ներկայ եղողների անունները, որի համար տէր-Ղեւոնդ Խարազեանը կարդում է ընտրուածների անուն-ազգանունները Թիֆլիսի եկեղեցիների և գաւառական բարեկարգութիւնների կարգով։ Ներկայ եղողները յայտնում են իրանց ներկայ լինելը, երբ նոցա անունը կարդացւում է։

---

[1]) «Մուրճ»-ի անցեալ № 1-ում (Ամսայ քրոնիկ) յայտնուած էր թէ Թիֆլիսի թեմի բոլոր ծխական երեսփոխանների թիւն է 103։ Այդ թիւը ճիշդ էր. բայց որ ժողովին 100 հոգի էին հրաւիրուած, այդ նրանից է, որ Թեմ. առաջնորդը անվաւեր համարեց ս. Լուսաւորիչ եկեղեցու ընտրութիւնը։

վերստուգութիւնից յայտնեց, որ բացակայ էին՝

1) Ալեքս. Մանթաշեան և իշխ. Արղութեան, որոնք գրաւոր ոչինչ յայտնած չէին։

2) Ալ. Մելիք-Ազարեան, որի մասին Եզեկեանը յայտնեց թէ նա, Մելիք-Ազարեանը, իրան մի բաց թուղթ է տուել սրբ. Նախագահին հասնելու համար այն դէպքում, եթէ նիստը կը կայանայ։

3) Նազար Ղազարեան, որից ստացած հեռագիրը պ. Մալխասեանը կարդում է, ուր ասած է թէ նա իւր կանդիդատի անունը հեռագրով ուղարկել է սրբ. Նախագահին։

4) Բացականեր, որոնք իրանց ձայնը վաւերացրած թղթերով յանձնել են ուրիշներին.

Ցակոբ Տէր-Պօղոսեանցին ներկայացնում է պ. Ն. Ծատուրեան։
Խանազեանցին՝ բժշկ. Բուշարեան։
Ցովհ. Մուրադեանին՝ Ց. Հասան-Ջալալեան։
Մատթ. Աղնաւուրեանին՝ Ալ. Բալանթար։
Դաւիթ Դաւթեանին՝ Պետրոս Սիմոնեան։
Գ. Ձերքեզեանցին՝ Ս. Սպանդարեան։
Ց. Մուրադեանին՝ Խ. Մալումեան։

Խօսք է լինում ներկայացուցիչ չ'ունեցող բացակաների մասին՝ և իմացւում, որ նոցա ձայնը չը պիտի հաշւի։

Պր. Գ. Տէր-Գրիգորեան (բժ.) յայտնում է որ Էջմիածնեցոց եկեղեցու առաջին անգամ (փետրուարի 2-ին) ընտրածները բողոքագիր են տուել իրան՝ ժողովում կարդալու համար։

Սրբ. Նախագահը մերժում է բողոք կարդալը։ Տէր-Գրիգ. դնում է բողոքագիրը սեղանի վերայ և հեռանում։

Նոյնը կատարում է պ. Լիսիցեան ս. Լուսաւորիչ եկեղեցու փետրւարի 2-ին ընտրածների կողմից։ Նոր-դարական ձայներից մէկը բացականչում է անպատկառ կերպով՝ պատառեցէք այդ թղթերը։

Ընկատողութիւն. Էջմիածնեցոց եկեղեցու փետր. 2-ին կատարած 3 հոգու ընտրութիւնը սրբ. առաջնորդը համարել էր անվաւեր, նշանակել էր վերընտրութիւն փետրուարի 23-ին, որ և կայացաւ։ Միայն փետր. 23-ին ընտրածները ստացել էին հրաւէրք ժողովին ներկայ գտնւելու։ Ս. Լուսաւորիչ եկեղեցում փետր. 2-ին կատարած ընտրութիւնը ս. առաջնորդը անվաւեր համարեց, բայց վերընտրութեան օրը ընտրութիւնը չը կատարեց։ Այդ եկեղեցուց ուրեմն ներկայացուցիչներ չը կային ժողովում)։

Այդ բողոքագրերի առիթով նկատեց ս. Նախագահը, թէ փետրուարի 2-ին կատարած ընտրութիւնները Էջմիածնեցոց և ս. Լուսաւորիչ եկեղեցում նա անվաւեր է համարել, որի մասին ինքը յայտնել է Սինոդին, ուղարկելով պահանջած թղթերը. բայց սինոդը չի յայտնել իրան թէ վաւեր են՝

Պր. Քալանթարը նկատում է թէ Սինոդը չի յայտնել թէ վաւեր է, ուրեմն նիւթը չի կարող կայանալ։

Ապա խօսք է ուզում պ. Գ. Արծրունին և յայտնում մօտաւորապէս հետեւեալը.

Գ. Արծրունի. «Այստեղ իրաւունքների խնդիր է ծագում. Ժողովը կազմուած է բաղկացուցիչ մասերից, որոնք դեռ չեն որոշուած. Քանի որ ձեր (առաջնորդի) դէմ Սինոդին, որպէս աւելի բարձր ինստանցիայի, բողոքել ենք մի քանի եկեղեցիներում կատարուած ընտրութիւնները քանդած լինելու համար, ուրեմն այստեղ վէճի խնդիր կայ. և քանի որ Սինոդը դեռ ևս վճիռ չի տուել այդ մասին, ուստի այսօրուայ ժողովը թերի է. Դիցուք Կումիտում երկու անգամ ընտրութիւններ են կատարուել. Սինոդը դեռ չի յայտնել թէ որն է նոցանից օրինաւոր, ուրեմն եթէ մենք այսօր ընտրութիւն անենք, Սինոդը կարող է կասացիա անել։ Իմ հակառակորդը Մողնու եկեղեցում ազնուութիւն է ունեցել պաշտպանելու իմ կուսակից երկու ծխականների իրաւունքները ընտրութեանը մասնակցելու. ինչու նոքա նոյն ազնուութիւնը չեն բանեցնում, պաշտպանելով ոչ թէ մի քանի ծխականների, այլ մի քանի եկեղեցիների հարիւրաւոր ընտրողների իրաւունքը։ Այդ բոլորի հիման վերայ ես և իմ համախոհները դուրս ենք գալիս»։

(Արծրունու հետ դուրս են գալիս նորա համախոհները թւով 45 հոգի. Դահլիճում մնում են մնացածները. Դրսում կանգնած մեծ, մինչ 500 հոգուց բաղկացած, ամբոխի կեցցէների գոչիւնը տևում է մի քանի րոպէներ. Անցնում է մօտ կէս ժամ մինչ նիստի վերսկսելը)։

Սբբ. Նախագահը հարց է առաջարկում, ընդունել արդեօք ժողովը կայացած. Միաձայն պատասխանում են՝ այո։

Աբգար Յովհաննիսեան. Յարգելի պ. Արծրունու ակնարկած հակառակորդը, որը Մողնու եկեղեցում պաշտպանել է նորա կուսակից երկու ծխականների իրաւունքները — ես եմ. Բայց նոցա պաշտպանելու պատիւը վերաբերում է ոչ թէ ինձ, այլ բոլոր ժողովին. Լատինական մի առած ասում է audiatur altera pars, այսինքն՝ հակառակորդին պէտք է լսել։ Բայց դորա դէմ մեղանչեց Արծրունին, դուրս գնալով ժողովից, առանց լսելու իւր հակառակորդներին. Մենք համակրութիւն ենք պարտական սրբ. Նախագահին, որը համբերողութիւն ցոյց տուեց, թոյլ տալով խօսել մեր հակառակորդներին. Այսօր մենք կանչուած ենք մեր աւանդական սրբազան իրաւունքները գործադրելու. Քանի որ ժողովին սկզբում ներկայ էին 90 հոգի, հետեւապէս ժողովը կայացած է։

Գէորգ Ն[illegible]եան. Պր. Արծրունու ասածով, ժողովը գումարելուց առաջ, պէտք էր սպասել Սինոդի վճռին. Բայց երբ խօսում են ներքին և վերին ատեանների մասին, պէտք է որ դորա վերաբերեալ մի կանոնադրութիւն լինի. Այդպիսին է միայն Պոլոժենիէն, ուր չի ասած թէ եկեղեցական ընտրութիւնների գործը պատկանում է Սինոդին, այլ ասած

է թէ նա պատկանում է թեմ. առաջնորդին։ Սինոդին դիմել են բողոքներով. բայց նոյն այդ Սինոդը կարող է վճիռ չը տալ նաև ամբողջ մի տարի, համարելով իրան իբր անձեռնհաս առնելու այդ բողոքները քննելու համար։ Քանի որ Սինոդից մինչ այժմ վճիռ չկայ, ուրեմն պէտք է կատարել առաջնորդի վճիռը։ Իմ զգացմունքները Արծրունու և կուսակցութեան այսօրուայ արարքի վերայ ես յայտնում եմ Սրբազանին, կառավարութեան ներկայացուցչին և յարգելի ժողովականներին, որ այդ վարմունքը վայել է միայն նրանց, որոնց համար չկայ ոչ կարգ, ոչ կանոն, ոչ սրբութիւն։

Աբէ. Նոխոֆով-Մոճէկ յայտնում է հետևեալը. «Մենք այսօր հաւաքուել ենք ոչ նրա համար, որ քննենք իմ և Սինոդի մէջ եղած գործերը (հաւանութեան նշաններ)։ Ես ընդունել եմ բողոքագիրները և յայտնել եմ Սինոդին, որը պահանջել էր խնդրին վերաբերեալ թղթերը։ Ես հնազանդ եմ իմ իշխանութեան։ Սինոդին յայտնի է որ այսօր, մարտի 8-ին, ես նշանակել եմ թեմ. պատգամաւորի ընտրութեան ժողովը։ Ուրեմն եթէ մինչ այժմ Սինոդը չի հրամայել ընտրութիւն չը կատարել՝ հետևապէս նա համաձայն է։ Եթէ գործով ես ապօրինի գործ եմ կատարում՝ ես կը պատժուեմ։ Եթէ այս ժողովը ապօրինի է, Սինոդը յետոյ էլ կարող է նորան վաւերական չը համարել։»

Նահանգապետի ներկայացուցիչ, ի. խ. պ. Աշչեռով, ժողովականների հարցմունքին պատասխանում է թէ նիստը կանոնաւոր է։

Սկսում են տալ թեկնածուների անունները։

Գ. Սունդուկեան։ Առաջարկում եմ քւէարկել միայն պ. Աբգար Յովհաննիսեանին և պ. Սպանդար Սպանդարեանին։ (Համաձայնութեան նշաններ)։

Անտոն Ղորղանեան կարծիք է յայտնում, որ ժողովը շարունակել կարող է միայն ներկայութեամբ $^2/_3$-ի և քանի որ ընդամենը ծխական ընտրածներ 100 են, հետևապէս գոնէ 66 հոգի պէտք է ներկայ լինեն։

Այդ պատճառով նա առաջարկում է հաշուել մնացած ձայները։

Նրան պատասխանում են թէ նիստը սկսել է 90 հոգով, և նիստի ընթացքում գնացածները չեն հաշււում։ Եւ նա համաձայնում է։ Նահանգապետի ներկայացուցիչը կրկնում է թէ ժողովը վաւերական է։

Խօսք է լինում Արծրունու քւէարկելու մասին։

Սունդուկեան յայտնում է որ քաղաքավարութիւն չէ քւէարկել մի բացակայի, առաջուց իմանալով որ կը սևանայ, քանի որ նորա կուսակիցները հեռացան։

Դնում են պպ. Աբգ. Յովհաննիսեանի և Սպ. Սպանդարեանի տուփերը։ Քւէարկութիւնը սկսւում է։ Հայր Ղևոնդ Խաչաքեանը կարդում է իրաւատուների ցուցակը առաջւայ կարգով։ Ներկայ եղողը, իրան կանչելիս՝ առաջ է գնում դէպի դիւանի սեղանը, ստորագրում է ընտրողական թղթին և մտնում տուփերին գնդեր գցելու համար։

Ներկայ էին և քւէարկութեան մասնակցեցին՝

1. Սուճդուկեան, Գաբրիէլ.
2. Յովհաննիսեան, Աբգար.
3. Ղորղանեան, Անտոն.
4. Ղանդուրալեան, Բարսեղ.
5. Տէր-Կարապետեան, Յովհ.
6. Ալիխանեան, Կոստանդին.
7. Խոսրովեան, Նիկող.
8. Խուդադեան, Յովհ.
9. Բաբայեան, Աւետիք, բժ.
10. Աւթանդիլեան, Միք., բժ.
11. Միրզոյեան, Մինայ.
12. Փիրումեան, Նիկ.
13. Մովսիսեան, Ստ.
14. Սպանդարեան, Սպ.
15. Միրիմանեան, Բագրատ.
16. Յարութիւնեան, Իսահակ.
17. Մելիք-Բաբախանեան, Իսահակ.
18. Տէր-Գրիգորեան, Սիմոն.
19. Արեղեան, Մանուկ.
20. Տէր-Յովհաննէսեան, Գրիգ.
21. Առաքելեան, Դարչօ.
22. Տէր-Աստուրեան, Աղասի.
23. Գրիգորեան, Նիկող.
24. Աբրահամեան, Նասլի.
25. Աքիմեան, Գէորգ.
26. Բէհբուդեան, իշխ. Կոստ.
27. Նաւանդուլեան, Գէորգ.
28. Տէր-Զաքարեան, Դանիէլ.
29. Ղաւալեան, Սարգիս.
30. Արարատեան, Կարապետ.
31. Ասրիեանց, Յարութիւն.
32. Յակոբեան, Եգոր.
33. Թալիբեան, Յովհ.
34. Թարխանեան, Գէորգ.
35. Արազեան, Ալեքս.
36. Տէր-Ներսէսեան, Ներսէս.
37. Թէմուրեան, Մնացական.
38. Ալիխանեան, Յովհ.
39. Վարշամեան, Յովհ.
40. Սարալեան, Գրիգոր, ինժ.
41. Տէր-Դաւթեան, Տիգրան.
42. Քուչարեան, Գրիգոր բժ.
43. Թաթուղեան, Միք.
44. Շահվերդեան, Սիմէօն.
45. Շահպարոնեան, Միք. բժ.
46. Էնֆիաճեան, Արշակ.
47. Ռոտինեան, Յովհ.
48. Բաղալեան, Յոր.
49. Վարդանեան, Արզուման.
5Г. Արարատեան, Արտաշէս.
51. Սիմէօնեան, Պետրոս.

Քւէարկութեան հետեւանքները.

Աբգար Յովհաննիսեան 46 սպիտակ և 4 սև (ինքը իր համար ձեռնպահ).

Սպանդար Սպանդարեան 43 սպիտակ և 7 սև (ինքը իր համար ձեռնպահ).

Անհետաքրքրական չեն հետեւեալ մանրամասնութիւնները. Ընդհանրապէս սպասում էին թէ 51 հոգուց քւէարկողները կը ստանան գոնէ 48 ձայն, այսինքն ժողովի սկզբում և ապա եկած 95 ձայների կէսից մէկով աւելին [1]). բայց երբ իմացուեց, որ Աբգ. Յովհաննիսեանը ստացաւ 46

---

[1]) Ինձ անհասկանալի մնաց թէ ինչու 95 հոգի հաշւեցին ժողովին մասնակցողների թիւը, քանի որ բացակաները միայն 4 հոգի էին, հետեւապէս, ըստ իս, ներկայ էին 96 հոգի.

ակտակ, ինքը քւէարկւողը և շատ ուրիշները մի մի հարցական նշաններ դարձան, որովհետև տարակուսանքի մէջ ընկան թէ արդեօք 46 ձայնով նա ընտրուած է թէ ոչ։ Այս ինչու փոխանակ ծափահարութիւնների՝ ընդհանուր լռութիւն (Verstimmung) տիրեց դահլիճում։ Մի փոքր ծափահարութիւններ վաստակեց պ. Սպանդարեանը, երբ վերջացաւ նորա քւէների հաշիւը, թէև վերջինս առաջնից աւելի քիչ ձայներ ստացաւ։ Բայց վերջը հանդարտացան, երբ տիրեց այն կարծիքը, որ քւէարկողներ պէտք է համարել ոչ 95 հոգի, այլ 51 հոգի, և որ հետևապէս ընտրուածները ստացել են ձայների բազմութիւն և կամ վիճելով որ նիստը սկսւեց 90 ձայնով և ոչ 95-ով, հետևապէս 46-ը կէսից աւելի է։ Գաւթում կանգնած ընտրուածներին համակիր մօտ 150 հոգուց բաղկացած ժողովուրդը սպասում էր ընտրուածներին ողջոյնի ցույցեր անելու

ԼՈՒՍԻՆԻ